ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Վարդենիս «20» սեպտեմբերի 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

/Գնումների գործընթացին մասնակցող անձին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին/

Ուսումնասիրելով **ՀՀԳՄՎՀ-ԲՄԱՇՁԲ-23/55** ծածկագրով գնման ընթացակարգի փաստաթղթային փաթեթը, ինչպես նաև <<Իջևանի Բետոնիտշին>> ԲԲ ընկերությանը (այսուհետ նաև՝ Մասնակից) վերաբերյալ գնումների գործընթացին մասնակցող անձին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, գնումների գործընթացին մասնակցող անձանց հայտերը գնահատող հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 2-ի թիվ 3 արձանագրությունը՝

ՊԱՐԶԵՑԻ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի կողմից կազմակերպվել է **ՀՀԳՄՎՀ-ԲՄԱՇՁԲ-23/55** ծածկագրով Վարդենիս համայնքի ոռոգման ջրի ջրագծերի կառուցման աշխատանքների ձեռք բերման գնման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ):
2. Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել Մասնակիցը:
3. Գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Մասնակցի հայտում արձանագրել է անհամապատասխանություններ, ինչի մասին 2023 թվականի հունիսի 2-ին կազմվել է թիվ 3 արձանագրությունը:
4. Մասնակիցը օրենսդրությամբ սահմանված կարգով չի ներկայացրել հայտի ապահովման բանկային երաշխիքի բնօրինակը, ինչը հանդիսանում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի «ե» ենթակետի պահանջի խախտում:
5. Մասնակիցը օրենսդրությամբ սահմանված կարգով ծանուցվել է հրավերի ընթացակարգի խախտման վերաբերյալ և առաջարկվել է վճարել հայտի ապահովման վճարը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառվելու համար:
6. Հիմք ընդունելով վերը նշված փաստերը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի «ե» ենթակետը՝ Հանձնաժողովը 2023 թվականի հունիսի 2-ին որոշում է կայացրել

Մասնակցի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին, ինչի վերաբերյալ կազմվել է թիվ 3 արձանագրությունը:

Այսիսով Մասնակցի կողմից Խախտվել են Ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները, ինչը հանգեցրել է Ընթացակարգին նրա հետագա մասնակցության դադարեցմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջները՝

ՈՐՈՇԵՑԻ

1. <<Իջևանի Բետոնիտշին>> ԲԲ ընկերությանը (ՀՎՀՀ՝07600534, հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, գ. Ազատամուտ) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,
2. Մասնակցի կողմից հայտի ապահովման գումարի վճարման դեպքում սույն որոշման 1-ին կետը կճանաչվի ուժը կորցրած,
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Մասնակցին և ՀՀ ֆինանսների նախարարություն,
4. Որոշումը կարող է բողոքարկվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ այն ստանալու օրվանից երեսուն օրվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Կատ. ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Վրտյոմ Մկրտչյան